ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
«ՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «10» ապրիլի 2026թ. ժամը 11:30-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Բաբայան

Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Ղազարյան, Ի. Գաբրիելյան, Ն. Սարգսյան, Հ. Մինասյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մնացականյան

1. **Տեղեկություն՝ «ՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/04» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման օրվա և ժամի մասին**

1.1 Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում հրապարակվելու օրվանից հաշված 10-րդ օրը՝ 09.04.2026թ. ժամը 11:30-ին

1.2 Հայտերը բացվել են էլեկտրոնային համակարգի միջոցով

1.3 Հակադարձ աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող օրը՝ 10.04.2026թ., ժամը 11:30-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

2. **Տեղեկատվություն գնման հայտերով սահմանված՝ գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտերով սահմանված սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Գնվելիք ապրանքի անվանումը	Գնման հայտով սահմանված գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	FortiGate 120G Firewall սարքաշար, ներառյալ ծրագրային ապահովման արտոնագիր	3 720 000

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումը և տվյալները

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N	Մասնակիցների անվանումը	Գտնվելու վայրը և կապի միջոցները
1.	«ԱՅՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Քըրք Քըրքորյան փող. 23/11 շենք, 96 տարածք Էլ.փոստ՝ info@isolutions.am Հեռ. +374 60 700111
2.	«ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք, Մոլդովական 60 Էլ.փոստ՝ vidtardan@gmail.com Հեռ. +374 99 638851

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

4. Տեղեկատվություն՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ ստացված հարցումների և տրամադրված պատասխանների մասին

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

6. «ՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/04» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները՝

Չափաբաժին 1: «FortiGate 120G Firewall սարքաշար, ներառյալ ծրագրային ապահովման արտոնագիր»

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/		
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	«ԱՅՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ	3100000	20 %	3720000	3069000	20 %	3682800
1	«ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ	24500000	20 %	29400000	24500000	20 %	29400000

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 10.04.2026թ. և Համակարգի կողմից ընտրված մասնակից է ճանաչվել «ԱՅՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ն:

Համակարգի կողմից «ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, քանի որ գերազանցել է գնումների պլանով նախատեսված գինը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

7. Տվյալներ՝ ընտրված մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի /դիմում-հայտարարության/ առկայության մասին

«ԱՅՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող փաստաթղթերը էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) և իրական շահառուների մասին հայտարարագիրը (Հավելված 1.3):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

8. Տվյալներ ընտրված մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխանության մասին

«ԱՅՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), իրական շահառուների մասին հայտարարագիրը (Հավելված 1.3) և Համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

9. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց «ԱՅՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:
2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օր:
3. Անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին ուղարկել Պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում հաստատել այն, նաև ներկայացնել կից գրությամբ պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ ներկայացրած գնային առաջարկի 15 (տասնհինգ) տոկոսի չափով՝ տուժանքի տեսքով: Ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Վ. Բաբայան

Անդամներ՝ _____ Գ. Ղազարյան

_____ Ի. Գաբրիելյան

_____ Ն. Սարգսյան

_____ Հ. Մինասյան

Քարտուղար՝ _____ Ա. Մնացականյան